Գառնի համայնքի ղեկավար

պարոն Տ. Պողոսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՍԱՆԵՐՋԻ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ 5 ՄՎտ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

Հարգելի պարոն Պողոսյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Սաներջի» ՍՊ ընկերությունը նախատեսում է Կոտայքի մարզի, Գառնի համայնքի վարչական տարածքում (Ազատամարտիկների խճուղի 14 հողամաս) իրականացնել 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքներ: Մանրամասները ներկայացված են ստորև.

Ձեռնարկողի անունը (անվանումը)՝ «Սաներջի» ՍՊԸ
Գտնվելու վայրը (Հասցե)՝ ՀՀ, ք. Երևան 0010, Տպագրիչների փող., շ. 13, բն. 60
Նախատեսվող գործունեության անվանումը՝ ՇՄԱԳ և փորձաքննության մասին օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան՝ հողմաէլեկտրակայաններ՝ 5 ՄՎտ եւ ավելի ընդհանուր հզորությամբ, ***արեւային էլեկտրակայաններ՝ 3 հա եւ ավելի տարածք զբաղեցնող*** կամ լողացող արեւային կայանքներ
Նպատակը՝ Էլեկտրական էներգիայի արտադրություն
Համառոտ նկարագիրը՝ Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի, Գառնի համայնքի վարչական տարածքում գտնվող մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքների վրա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը կցված է): Ըստ ներկայացված սեփականության վկայականների, նշված տարածքներում առկա չեն որևէ տիպի շենք-շինություններ:

«Սաներջի» ՍՊ ընկերությունը նախատեսում է կառուցել 5ՄՎտ հզորությամբ արևային կայան: Արևային կայանը հնարավոր է միացնել «Գառնի» 35 ԿՎ օդային գծին: Ներկայացված Ծրագրի նախագծող ընկերությունն է՝« Էկովիլ» ՍՊԸ:

Նախատեսվող գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, Վայք խոշորացված համայնք, Սարավան բնակավայր:

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ.